Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/2>> ծածկագրով Ավտոմեքենաների լվացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16.03.2018թ
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր
հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Սահմանված ժամկետում Կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել: Համաձայն Կարգի 44-րդ կետի՝ կոմիտեից տեղեկատվության չստանալու դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Հակվա>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Տ.Ղուկասյան

Անդամ՝ ---------- Շ.Իսախանյան

---------- Ս.Զաքոյան

---------- Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան